

### ՄԵՐ ԽՕՍՔԸ

Մարտը իր հետ կը բերէ գարունը: Գարնան հետ կու գան տաքուկ արեւն ու ուրախ կեանքը: Մարտին կը սօսենք Կանանց Միջազգային Օրը եւ Միջինքը: Կարգ մը երկիրներու մէջ կը նշուի նաեւ Ուսուցիչներու Տօնը:

Սիրելի աշակերտներ, մենք ալ գարնան հետ, հաւաքենք մեր ուժերը եւ նոր խանդավառութեամբ սորվինք մեր դասերը, լաւ արդիւնքներ ապահովելու համար: Երբ հետեւողական ձեռով աշխատինք, մեր երազները կը դառնան իրականութիւն:

Յաջողութիւն եւ բարի աշխատանք:

### «ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆ» ՅՈՒՇԱՐՁԱՆԸ



«Մայր Հայաստան» յուշարձանը հաստատուած է Երեւանի Յաղթանակի զբօսայգիին մէջ 1967 թուականին: Յուշարձանին հեղինակն է քանդակագործ Արա Յարութիւնեան, իսկ ոտնաքարը գործն է յայտնի ճարտարապետ՝ Ռաֆայէլ Իսրայէլեանի:

«Մայր Հայաստան»-ը 22 մետր երկարութիւն ունի, սակայն ոտնաքարին հետ միասին յուշարձանին ընդհանուր երկարութիւնը 51 մետրի կը հասնի: Մայր Հայաստանը շինուած է պղինձէ, իսկ ոտնաքարը՝ երկաթաքարէ:

«Մայր Հայաստան» յուշարձանը կը ներկայանայ որպէս երկրի պահապանը: Հայ մայրը սուրը ձեռքին իր կեցուածքով կ'արտայայտէ առնականութիւն, ուժ, հերոսութիւն եւ յաղթանակ:

Քանդակագործ Արա Յարութիւնեան իր այս գործով ուզած է ներկայացնել հզօր, հպարտ, ուժեղ եւ խիզախ հայ կինը, որ պատրաստ է պաշտպանելու իր զաւակներն ու իր հայրենի հողը: «Մայր Հայաստան»-ը երբեք չի վախնար թշնամիէն:

### ՄԻՋԻՆՔ

Միջինքը մեզի կը յիշեցնէ, թէ Մեծ Պահքը հասեր է իր կէսին. ինչ որ առիթ կու տայ մենք զմեզ քննելու եւ բարի գործեր ընելու:

Հայկական սովորութեան համաձայն Միջինքին հայ տիկիններ կը պատրաստեն Միջինքի գաթան:

Ժամանակին, Միջինքի օրը հարսերն ու աղջիկները կանաչութեամբ ծածկուած որեւէ տեղ մը ընտրելով իրարու մօտ կու գային: Հոն մէկը միւսին կը պատմէր իր կեանքի լաւ եւ դժուար կողմերը: Յետոյ շուրջպար կը պարէին եւ կ'ուտէին իրենց շինած կուտապը:



Կուտապ



Շուրջպար



## ԳԻՐՔ ԵՒ ԸՆԹՐԵՑԱՆՈՒԹԻՒՆ



### 7 պատճառներ, որոնք կը մղեն մեզ գիրք կարդալու:

1

Ընթերցանությունը կը հարստացնէ մեր բառապաշարը: Ընթերցելու ժամանակ կը ծանօթանանք նոր բառերու: Անոնց իմաստը սորվելէ ետք, կ'օգտագործենք զանոնք անելցնելով մեր առօրեայ բառապաշարին մէջ:

2

Ընթերցելով կ'ըլլանք անելի սահուն ընթերցողներ:

3

Ընթերցանությունը կը զօրացնէ մեր ինքնավստահութիւնը: Գիրքերէն մեր սորված դասերը կը դառնան հիմքերը մեր արժէքներուն եւ կարծիքներուն:

4

Ընթերցանությունը կը զարգացնէ մեր երեւակայութիւնը: Գիրքերը շատ յաճախ նկարներ չունին: Ընթերցողը ինքնաբերաբար կ'օգտագործէ իր երեւակայութիւնը իր մտքին մէջ ստեղծելով պատմութեան կերպարները, վայրերը եւ դրուագները:

5

Ընթերցանությունը հաճելի ժամանց մըն է հարուստ գիտելիքներով: Գիրք կարդալը կրնայ ըլլալ շատ հաճելի ժամանց մը, որ նոյն ատեն արդիւնաբեր է եւ կը զարգացնէ մեր միտքը:

6

Ընթերցանությունը կը բարելաւէ մեր յիշողութիւնը:

7

Ընթերցանությունը կը զարգացնէ մեր գրելու կարողութիւնը:



## ԿԱՐԻՃ

Կարիճը գիշատիչ կենդանի մըն է, որ կը պատկանի սարդակերպ կենդանիներու ընտանիքին: Ան ունի 8 ոտք, զոյգ մը ճանկեր, արտակմախք մը եւ բարակ ու երկար պոչ մը: Կարիճին պոչը կը ծռի իր կոնակին վրայ, եւ իր պոչին ծայրը թունաւոր խայթոց մը կայ: Ան իր վտանգաւոր պոչը կ'օգտագործէ իբրեւ պաշտպանական գործիք իր թշնամիներուն դէմ:

1750 տեսակի կարիճներ կան: Անոնք տարբեր չափի են, բայց արտաքին տեսքով նման են իրարու: Կարիճները կրնան ունենալ 1,3 սանդիմներէն մինչեւ 23 սանդիմներ երկարութիւն: Անոնք 7 անգամ կը փոխեն իրենց արտակմախքները մինչեւ հասնին իրենց ամբողջական հասակին: Կարիճները գիշերային կենդանիներ են: Անոնք ցերեկը կը պահուրտին քարերու տակ կամ ժայռերու մութ ճեղքերուն մէջ: Անոնք մէկ գիշերուան ընթացքին կրնան շատ մեծ քանակութեամբ միջատներ ուտել, որմէ ետք կարելիութիւնը կ'ունենան 6-էն 12 ամիս ապրելու առանց ուտելու:

## ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ



Ստեփանակերտը Արցախի Հանրապետութեան մայրաքաղաքն է: Աշխարհագրականօրէն ան կը գտնուի երկրի կեդրոնը:

Ստեփանակերտը ունի մեղմ եղանակ. ձմրան ընթացքին -0,2°C կ'ընէ, իսկ ամրան՝ +22,4°C: Ան կը գտնուի հայկական լեռնաշխարհի հարաւարեւելքը: Քաղաքը շրջապատուած է անտառներով եւ այգիներով:

Ստեփանակերտը Արցախի Հանրապետութեան կրթութեան եւ մշակութային կարեւոր կեդրոնն է: Այս իմաստով, իր գրադարաններուն կողքին մեծ դեր ունի պատմութեան թանգարանը, ուր հին ժամանակներէ ի վեր հաւաքուած ու պահպանուած են հետաքրքրական բազմաթիւ նիւթական ու հոգեւոր ազգային արժէքներ:



Մեր կեանքին մէջ, ուսուցիչը այն կարեւոր դէմքն է, որ մեզի կը փոխանցէ լեզու եւ գիտելիքներ: Ան կը բացայայտէ մեր ձիրքերը եւ կը պատրաստէ մեզ, որ ապագային մենք ըլլանք յաջող անհատներ:

Հայ ուսուցիչը այս բոլորին կողքին, նաեւ այն դաստիարակն է, որուն շունչով կը սորվինք մեր մայրենի լեզուն, մեր պատմութիւնն ու մեր մշակոյթը: Հայ դպրոցէն ներս, հայ ուսուցիչը մեզի կը փոխանցէ մեր ազգային արժէքները, որոնց շնորհիւ կը ճանչնանք մենք մեզի եւ կը պահենք մեր հայութիւնը:

Հորիզոն Մանկապատանեկանի այս թիւով կը հրապարակենք հայ ուսուցիչի գովքը կատարող հայ աշակերտի ջերմ զգացումները, որոնք յայտնաբերուեցան Համազգային Հայ Կրթական եւ Մշակութային Միութեան Գանատայի Շրջանային վարչութեան կազմակերպած «Իմ հերոս» շարադրական մրցոյթին:

Իմ հերոսս իմ դպրոցի հայերէն լեզուի ուսուցչուհիս՝ տիկին Յասմիկ Պապեանն է: Իր դասապահերը բոլոր դասընկերներու եւ ինծի համար շատ հաճելի են, որովհետեւ ան կատակներ ընելով մեզի դաս կը սորվեցնէ: Տիկին Յասմիկը գիտէ, թէ մեզմէ ամէն մէկը տարբեր կարողութիւններ ունի: Երբ դժուարութիւն ունինք, կ'օգնէ մեզի, որ հասկնանք:

Ան իմ հերոսս է, որովհետեւ դասէն դուրս ան մեզի կը խօսի Արցախի պատերազմին եւ Հայաստանի խնդիրներուն մասին: Ինքն է, որ ինծի կը սորվեցնէ ինչպէս լաւ հայ ըլլամ եւ մտածեմ, թէ ինչպէս կրնամ օգտակար ըլլալ իմ ազգիս ու հայրենիքիս:

Ահա թէ ինչու իմ հայերէնի ուսուցչուհիս՝ տիկին Յասմիկը իմ հերոսս է:

**Սեպաստիան Վարդանեան**  
**ՀՕՄ-ի Լափոյեան երկրորդական վարժարան – Ը. Դասարան**

Իմ հերոսս իմ հայերէնի ուսուցչուհիս՝ տիկին Յասմիկ Պապեանն է: Ան երկար տարիներ է Վեր մեր դպրոցի ուսուցչուհին է: Իմ հերոսս է, որովհետեւ ան ամէն ջանք կը թափէ, որ իր աշակերտները սիրեն հայերէն լեզուն եւ նուիրուին իրենց հայրենիքին: Իմ հերոսս է նաեւ, որովհետեւ կ'օգնէ ինծի որ ըլլամ լաւ աշակերտ եւ բարձրացնեմ բոլոր նիշերս: Իր քաջալերանքներով է, որ զօրացաւ իմ ինքնավստահութիւնս:

Տիկին Յասմիկը կ'ուզէ, որ բոլոր աշակերտները կանուխ հասնին դպրոց, աղօթեն «Հայր մեր»-ը եւ երգեն Հայաստանի, Արցախի, Գանատայի եւ մեր դպրոցի քայլերգները: Ան ծնողքի մը նման կը գուրգուրայ մեր վրան ու կը քաջալերէ մեզ, որ ըլլանք տիպար աշակերտներ:

**Արի Մուրադեան**  
**ՀՕՄ-ի Լափոյեան երկրորդական վարժարան – Ը. Դասարան**

Հերոսս իմ ութերորդ դասարանի հայերէնի ուսուցչուհիս է՝ տիկին Մարալ Անթապեանը: Այս տարի առաջին տարին է, որ ինծի իմ մայրենի լեզուն կը սորվեցնէ: Այս շարադրութեամբ ձեզի պիտի ներկայացնեմ տիկին Մարալին արտաքին յատկութիւնները, բնատրութեան գիծերը, նաեւ այն պատճառները, որոնց շնորհիւ ան դարձած է իմ հերոսս: Պիտի պատմեմ նաեւ, թէ ան ինչ օգուտ կը բերէ մեզի եւ վերջապէս իր որ յատկանիշները կ'ուզեմ ունենալ:

Տիկին Մարալը ակնոց կը դնէ: Ան ունի գանգուր սեւ մազեր մինչեւ ուսերը եւ սրճագոյն աչքեր: Ան միշտ գեղեցիկ վզկապներ ունի իր վիզին վրայ: Իմ ուսուցչուհիս շատ բարեսիրտ է: Ան ամէն ինչ կ'ընէ, որ մենք մեր մայրենի լեզուն սորվինք, գիտնանք մեր երգերը, մեր տօները, եւ մեր հայութիւնը պահենք:

Իմ հայերէնի ուսուցչուհիս իմ հերոսս է, որովհետեւ ան մեզի հոգ կը տանի. կրնամ նոյնիսկ ըսել, թէ իմ երկրորդ մայրս է դպրոցին մէջ: Ան նաեւ կը սորվեցնէ մեզի կոկիկ, քաղաքավար եւ կիրթ ըլլալու կանոնները:

Այս տարի, ան ինծի շատ օգնեց, որ հայերէնս բարելաւեմ: Անցեալ տարի ես հայկական դպրոց չէի յաճախեր, ուրեմն պէտք էր անցեալ տարուան դասերն ալ սորվէի: Տիկին Մարալը համբերութեամբ բացատրեց այդ ամէնը:

Ես շատ կ'ուզեմ ուսուցչուհիս պէս բոլորին դիմաց խօսելու համարձակութիւնը ունենալ: Կը փափաքիմ նաեւ ունենալ իր բարի սիրտը, որ ուրախացնեն ուրիշները:

Որպէս վերջաբան, կ'ուզեմ ըսել, որ տիկին Մարալը սիրած ուսուցչուհիներէս մէկն է: Ան ինծի շատ օգտակար դարձած է ամէն հարցի մէջ եւ շատ լաւ յատկանիշներ ունի:

**Սիլվի Օգճեան**  
**Սուրբ Յակոբ Ազգային վարժարան – Ը. Դասարան**

Իմ հերոսս Անահիտ Պալեանն է: Անահիտը իմ դաստիարակս է: Ան կ'օգնէ ինծի ոչ միայն դասերուս, այլեւ արտադպրոցական աշխատանքներուս մէջ: Ես կը վստահիմ իրեն, որ ինծի ճիշդ ճամբան ցոյց տայ եւ յաջողիմ իմ դպրոցական կեանքիս մէջ:

Անահիտը ինծի շատ դաստիարակչական դասեր եւ խրատներ փոխանցած է. ինչպիսին են բարեկամութիւն հաստատելը, յարգանք ցոյց տալը, ինքնավստահութիւն ունենալը, անձնուէր եւ համբերատար ըլլալը:

Անահիտը ինծի օգնեց, որ բարձրացնեմ իմ նիշերս, յատկապէս ֆրանսերէնի եւ թուաբանութեան մէջ, որոնք շատ կարեւոր են ապագայիս համար: Ան մօտէն կը հետեւի ինծի, որպէսզի լաւ արդիւնքներ ապահովեմ դպրոցական աշխատանքներուս մէջ եւ ինծի միշտ կը յիշեցնէ, որ ըլլամ ինքնավստահ:

Աշխատասէր դաստիարակս միշտ ժամանակ կ'ունենայ ինծի համար եւ երբեք չի մերժեր զիս: Անահիտը լաւ ազդեցութիւն ունի իմ վրաս, որովհետեւ ան զիս կը քաջալերէ. կը մղէ զիս, որ ճիշդ թափեմ եւ կը գնահատէ իմ ձեռք ձգած յաջող արդիւնքներս:

Անահիտը իր ժամանակը միայն ինծի չի տրամադրեր, այլ նաեւ իր ազգին եւ համայնքին: Ան գանազան միութիւններու մաս կը կազմէ եւ սփիւռքի հայութեան վերաբերող գործերով կը զբաղի: Ան շատ յայտնի է, իր ասմունքելու բացառիկ կարողութեամբ, նաեւ հայ գրականութեան նկատմամբ յատուկ սէր ու հետաքրքրութիւն ունենալուն համար:

Երբ մեծնամ եւ երիտասարդ աղջիկ ըլլամ, կ'ուզեմ հետեւիլ Անահիտին օրինակին, օգնելով կարիքաւորներուն, ընտանիքիս եւ հայ ազգիս: Իր օրինակով ես սորվեցայ ըլլալ տիպար, աշխատասէր, հնազանդ, հոգատար եւ բոլորին հանդէպ յարգանքով:

**Իզապէլ Նալպանյան**  
**Սուրբ Յակոբ Ազգային վարժարան – Ը. Դասարան**



**ԽՕՍՔ ԻՄ ՈՐԴՈՒՆ**  
(հատուած)

Լսիր որդիս, պատգամ որպէս,  
Սիրող քո մօր խօսքը սրտանց,  
Այսօրուանից յանձնում եմ քեզ,  
Հայոց լեզուն հազարագանձ:

Կտրել է նա հանց աստղալոյս,  
Երկինքները ժամանակի,  
Շառաչել է խռովայոյզ,  
Սլացքի հետ Հայկեան նետի:

Ու Մետրոպի Սուրբ հանճարով,  
Դարձել է գիր ու մագաղաթ,  
Դարձել է յոյս, դարձել դրօշ,  
Պահել երթը մեր անաղարտ:

Նրանով է մայրս ջահել  
Ինձ օրօրոց դրել մի օր,  
Հիմա եկել քեզ է հասել  
Նրա կարկաչը դարաւոր:

Պահիր նրան բարձր ու վճիտ,  
Արարատի Սուրբ ձիւնի պէս,  
Պահիր նրան սրտիդ մօտիկ,  
Քո պապերի աճիւնի պէս:

Ու ոսխի զարկիցը սեւ  
Դու պաշտպանիր կրծքով նրան,  
Ինչպէս մօրդ կը պաշտպանես,  
Թէ սուր քաշեն մօրդ վրան:

Ու տեն որդիս, ուր էլ լինես,  
Այս լուսնի տակ ուր էլ գնաս,  
Թէ մօրդ անգամ մտքից հանես,  
Քո մայր լեզուն չմոռնաս:



**ՍԻԼՎԱ  
ԿԱՊՈՒՏԻԿԵԱՆ**

Սիլվա Կապուտիկեան, բուն անունով Սիրվարդ, ծնած է Երեւան 20 Յունուար 1919-ին: Զաւակն է Բարունակ Կապուտիկեանի, որ Վանի մէջ ծանօթ եղած է որպէս դաշնակցական գործիչ, ուսուցիչ եւ խմբագիր:

Սիլվա Կապուտիկեան իր առաջին բանաստեղծութիւնը գրած է 13 տարեկանին «Սիլվա» ծածկանունին տակ եւ հրատարակած է զայն 1933-ին: Յաճախած է Երեւանի պետական համալսարանի բանասիրական բաժինը, որմէ ետք ասարտած է Մոսկուայի գրականութեան հիմնարկի բարձրագոյն դասընթացքը:

Սիլվա Կապուտիկեան եղած է անդամ Հայաստանի Գրողներու միութեան եւ հրատարակած է բազմաթիւ գիրքեր: Այդ գիրքերուն մէջ կան բանաստեղծութիւններ, արձակ գրութիւններ եւ մանակական ստեղծագործութիւններ: Ան այցելած է Սփիւռքի տարբեր գաղութները եւ մօտէն ծանօթացած է Հայոց Տեղասպանութենէն վերապրողներու պատմութեան: Այս գծով իր տպաւորութիւնները արձանագրած է իր բանաստեղծութիւններուն մէջ:

Սիլվա Կապուտիկեան շահած է բազմաթիւ մրցանակներ եւ պարգեւատրուած է «Պատուոյ Նշան», «Սուրբ Մետրոպ Մաշտոցի» եւ այլ շքանշաններով:

Իր նշանաւոր ստեղծագործութիւններէն մէկն է «ԽՕՍՔ ԻՄ ՈՐԴՈՒՆ» բանաստեղծութիւնը:

**Ո՞Վ Կ՛ՈՒԶԷ ԸԼԼԱԼ ԲԱԶՄԱԳԵՏ**

Մարտ ամսուան հարցումներու պատասխաններուն ժամկէտն է 10 Ապրիլ 2023: Հետեւաբար սիրելիներ, արձանագրեցէք զանոնք թուղթի մը վրայ, նշելով ձեր անունն ու ձեր յաճախած դպրոցին անունը: Յետոյ ուղարկեցէք այդ թուղթը Հորիզոնի խմբագրատուն՝ 3401 Oliver Asselin Montreal, Canada H4J 1L5

**1- Ո՞ւր հաստատուած է Մայր Հայաստանի յուշարձանը:**

- ա) Երեւանի Կոմիտասի անուան զբօսայգիին մէջ:
- բ) Երեւանի Յաղթանակի զբօսայգիին մէջ:
- գ) Վանաձորի Սայաթ Նովայի անուան զբօսայգիին մէջ:

**2-Ո՞վ է Մայր Հայաստանի յուշարձանի հեղինակը:**

- ա) Քանդակագործ Արա Յարութիւնեան:
- բ) Քանդակագործ Արտաշէս Յովսէփեան:
- գ) Քանդակագործ Արա Շիրազ:

**3- Ընթերցանութիւնը կը զօրացնէ մեր ինքնավստահութիւնը:**

- ա) Ճիշդ:
- բ) Սխալ:

**4- Ընթերցանութիւնը հաճելի ժամանց մըն է եւ...**

- ա) Կը զարգացնէ մեր միտքը:
- բ) Կը զարգացնէ մեր մարմինը:

**5- Կարիճին թունաւոր խայթոցը իր մարմնի դր մասին մէջն է:**

- ա) Իր գոյգ ճանկերուն մէջ:
- բ) Իր ոտքերուն ծայրը:
- գ) Իր պոչին ծայրը:

**6- Արցախի Հանրապետութեան մայրաքաղաքն է...**

- ա) Մարտակերտը:
- բ) Շուշին:
- գ) Ստեփանակերտը:

**7- Ո՞վ է Սիլվա Կապուտիկեանը:**

- ա) Հայ քանդակագործուհի մըն է:
- բ) Հայ բանաստեղծուհի մըն է:
- գ) Հայ դերասանուհի մըն է:

**8- Ինչ կ'ընէ Սիլվա Կապուտիկեան իր «ԽՕՍՔ ԻՄ ՈՐԴՈՒՆ» բանաստեղծութեան մէջ:**

- ա) Սիրէ մայրենի լեզուդ եւ մաքուր խօսելով պաշտպանէ զայն, այնպէս ինչպէս կը պաշտպանես մօրդ երբ թշնամին սուր քաշէ մօրդ վրան:
- բ) Աշխարհի վրայ ուր ալ գտնուիս, եթէ նոյնիսկ մօրդ մոռնաս մի՛ մոռնար հայերէնը:
- գ) Վերոյիշեալ երկու պատասխանները (ա) եւ (բ):



Մանկապատանեկան Հորիզոնը կը հովանաւորեն ՀՕՍ-ի Գանատայի Երջանային վարչութիւնը եւ Գանատայի շրջանի իր 10 մասնաճիւղերը

Հեռաձայն (514) 332-3757  
Email: sylva@horizonweekly.ca  
Խմբագրութիւն՝ Անահիտ Պալեանի  
Թիւր պատրաստեց Թալիա Ճապրայեան  
Ձեւադրեց՝ Լորի Խաչերեանի